ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/197

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Մասնակից՝ «Մեգամետր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Մեգամետր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հ. 63 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ.հ. 137, 143, և 147 մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13700-2020 գրությամբ «Մեգամետր» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 03.09.2020թ. թիվ 01/61-16640 գրության հիման վրա, 10.09.2020թ.-ին «Մեգամետր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 10.09.2020թ.-ին:

10.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/197 համարի ծածկագիրը:

16.09.2020թ.-ին, 23.09.2020թ.-ին, 02.10.2020թ.-ին և 09.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.10.2020թ.-ին:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 03.09.2020թ. թիվ 01/61-16640 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ՄԵԳԱՄԵՏՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել են 20.04.2020 թվականին՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և 28.04.2020 թվականին՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով գնման պայմանագրերը (այսուհետ՝ պայմանագրեր):

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հ. 63 մանկապարտեզի հիմնանորոգման և թակի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանքներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածում սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ.հ. 137, 143, և 147 մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» ծածկագրով պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ, որը ավարտվում է 18.06.2020 թվականին, իսկ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրով պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ, որը ավարտվում է 11.06.2020 թվականին, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետներում պայմանագրերով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը:Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մեգամետր» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Կից տրամադրվում է վերը նշված պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

3. <u>«Մեգամետր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 10.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Մեգամետր» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.09.2020թ.-ի թիվ

26/26-1/13700-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մեգամետր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև կնքվել են 20.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և 28.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով գնման պայմանագրերը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Երևանի քաղաքապետարանի և «Մեգամետր» ՍՊԸ-ի միջև կնքված 20.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և 28.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով գնման պայմանագրերի կատարման վերջնաժամկետ է սահմանվել համապատասխանաբար՝ 18.06.2020թ. և 11.06.2020թ.:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Մեգամետր» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված 20.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և 28.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով գնման պայմանագրերը Պատվիրատուի կողմից 01.09.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրերի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ¬ցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ Երևանի քաղաքապետարանի և «Մեգամետր» ՍՊԸ-ի միջև կնքված 20.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և 28.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով գնման պայմանագրերը Պատվիրատուի կողմից 01.09.2020թ. միակողմանի լուծվել են՝ Պայմանագրերի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ա) Պայմանագրերի լուծման համար հիմք հանդիսացած աշխատանքները Պայմանագրերով սահմանված ժամկետում չկատարելու հիմքերի վերաբերյալ

Հարկ ենք համարում նշել, որ Երևանի քաղաքապետարանի և «Մեգամետր» ՍՊԸ-ի միջև կնքված 20.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և 28.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով գնման պայմանագրերի կատարման վերջնաժամկետ է սահմանվել համապատասխանաբար՝ 18.06.2020թ. և 11.06.2020թ.:

Այս պարագայում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել այն հանգամանքի վրա, որ եթե Պատվիրատուի համար պայմանագրերը միակողմանի լուծման համար հիմք է հանդիսացել 2.1.3 կետի «բ» ենթակետը, այն է՝ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը (այն է՝ 18.06.2020թ. և 11.06.2020թ.), ապա ինչու է նույն Երևանի քաղաքապետարանը Պայմանագրերի գնման ժամանակացուցերով նախատեսված մատակարարման ժամկետների ավարտից հետո գրեթե 3 ամիս անց, երբ արդեն բաց է թողել Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի ուժով պայմանագիրը լուծելու իրավունքը՝ սահմանված ժամկետի մասով, որոշում է կայացրել 01.09.2020թ. միակողմանիորեն լուծել Երևանի քաղաքապետարանի և «Մեգամետր» ՍՊԸ-ի միջև կնքված 20.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և 28.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով գնման պայմանագրերը, նույն 2.1.3 կետի բ) ենթակետի ուժով:

Այսինքն անհասկանալի պայմաններում Պայմանագրերով սահմանված ժամկետների ավարտից մոտ 3 ամիս անց Պատվիրատուն որոշում է կայացրել Ընկերության հետ կնքված պայմանագրերը լուծել և տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ

իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

բ) Պատվիրատուի կողմից պայմանագրերի շնորհում չուղարկելու պատճառով նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմման աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունը չուղարկելու մասով

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն կարևորագույն հանգամանքի վրա, որ «Մեգամետր» ՍՊԸ-ն զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Մասնավորապես՝

Ցանկանում ենք նշել, որ ճիշտ է, Երևանի քաղաքապետարանի և «Մեգամետր» ՍՊԸ-ի միջև թղթային եղանակով կնքվել են 20.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և 28.04.2020թ.՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով գնման պայմանագրերը, սակայն Պատվիրատուի կողմից www.armeps.am համակարգով պայմանագրերի շնորհում չուղարկելու պատճառով Ընկերությունը նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմման աշխատանքների վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունը ուղարկելու հնարավորություն չի ունեցել:

Ավելին, այս պայմանագրերի մասով www.armeps.am համակարգում ընդհանրապես դաշտ լրացված չէ:

Պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 3.2-րդ կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը համապատաս-խանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաս¬տա¬թղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 3.3-րդ կետի համաձայն՝ եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Սակայն ցանկանում ենք անդրադառնալ այն փաստին, որ Պատվիրատուի կողմից պայմանագրերի շնորհում չի տրվել և Ընկերությունը օբյեկտիվոր զրված է եղել աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրությունը ներբեռնելու հնարավորությունից, որով կապացուցվեր, որ «Մեգամետր» ՍՊԸ-ի կողմից օրենքով և պայմանգրով սահմանված ժամկետներում կատարվել է նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմման աշխատանքները:

Մինչդեռ «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1370-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի թիվ 386-Ն որոշման 20-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի՝ www.armeps.am կայքի միջոցով պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը

համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

Նույն որոշման 21-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկն ստացած մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը:

Արդյունքում Պատվիրատուի կողմից պայմանագրային պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի թիվ 386-Ն որոշման ոչ պատշաճ կատարման և թույլ տված անգործության հետևանքով այսօր «Մեգամետր» ՍՊԸ-ն հայտնվել է <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառվելու վտանգի առջև:»:

Վերոգրյալը հաշվառմամբ, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Մեգամետր» ՍՊԸ-ին չվերագրել «Գմումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2020/197 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մեգամետր» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ.-ին և 28.04.2020թ.-ին կնքվել են համապատասխանաբար թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» (այսուհետ նաև՝ Պայմանագիր 1) և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» (այսուհետ նաև՝ Պայմանագիր 2) ծածկագրերով պետական գնման պայմանագրեր:

ii. Պայմանագիր 1-ի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի h. 63 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագիր 2-ի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի h.h. 137, 143, և 147 մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iv. Պայմանագրերի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

v. Պայմանագիր 1-ի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ:

vi. Պայմանագիր 2-ի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 01.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 01/61-16427 ծանուցման

համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Մեգամետր» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ.-ին և 28.04.2020թ.-ին կնքված համապատասխանաբար թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով պետական գնման պայմանագրերը Երևանի քաղաքապետարանի կողմից 01.09.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրերի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը):

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13700-2020 գրությամբ «Մեգամետր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Մեգամետր» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ.-ին և 28.04.2020թ.-ին կնքված համապատասխանաբար թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով պետական գնման պայմանագրերի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է աշխատանքների կատարման ժամկետ՝ Պայմանագիր 1-ը ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ, իսկ Պայմանագիր 2-ը՝ 45-րդ օրացուցային օրը ներառյալ:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 01.09.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 01/61-16427 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Մեգամետր» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ.-ին և 28.04.2020թ.-ին

կնքված համապատասխանաբար թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» և «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրերով պետական գնման պայմանագրերը Երևանի քաղաքապետարանի կողմից 01.09.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրերի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Մեգամետր» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 01.09.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մեգամետր» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրերի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված աշխատանքները չեն կատարվել վերջինիս կողմից դրսևորած անգործության արդյունքում, իսկ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի հրաժարվել է Մասնակցի հետ կնքված գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ «Մեգամետր» ՍՊԸ-ի կողմից կատարվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները և այդ աշխատանքների 28.08.2020թ.-ին Պատվիրատուին ուղարկված լինելու փաստի մասին վկայող փաստերին (էլ. հասցեի միջոցով ներկայացված ապացույցներին), ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ նշվածը հերքվում է Պատվիրատուի կողմից ներկայացված գրությամբ, համաձայն որի՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/63» ծածկագրով պայմանագրի նախագծային փաստաթղթերը ներկայացվել են բացթողումներով և ոչ լիարժեք, առանց նախահաշվի, իսկ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/38» պայմանագրով ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել, ինչի արդյունքում փորձաքննություն չի նշանակվել:

Ինչ վերաբերում է Մասնակցի այն դիրքորոշմանը, որ պայմանագրերը լուծվել են դրանց գործողության ավարտից շուրջ 3 ամիս անց, ինչպես նաև պայմանագրերի շնորհում armeps համակարգով չի ուղարկվել, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պայմանագրերի 7.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Մասնակցի կողմից դիրքորոշմամբ չներկայացվեցին բավարար փաստեր ու հանգամանքներ, որոնց առկայության պարագայում հնարավոր կլիներ հաստատված համարել armeps համակարգի միջոցով պայամանգրի շնորհում չուղարկելու և պայմանագրերի գործողության ավարտից շուրջ 3 ամիս անց լուծելու փաստերի վերաբերելիությունը՝ Մասնակցի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների խախտման հանգամանքին: Այն որ Պատվիրատուի կողմից թույլ տրված նշված ենթադրյալ խախտումները հանգեցրել են Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը: Ավելին, Մասնակիցը պայմանագրերի գործողության ավարտից հետո մինչև դրաց լուծումը կարող էր կատարել ստանձնած պատավորությունները, որը չի արել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգամետր» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պայմանագրով

ստանձնած պարտավորությունների դադարեցմանը և պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13700-2020 գրությամբ «Մեգամետր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/197 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մեգամետր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**